

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈԼԵԳԻԱ

ՈՐՈՇՈՒՄ

«07» հոկտեմբերի 2014 թվականի **թիվ 186**

քաղ. Մոսկվա

«Մաքսային միության եւ Չինաստանի Ժողովրդական Հանրապետության մաքսային սահմաններով տեղափոխվող ապրանքների եւ միջազգային փոխադրման տրանսպորտային միջոցների վերաբերյալ տեղեկություններ փոխանակելու մասին համաձայնագիր կնքելու առնչությամբ Չինաստանի Ժողովրդական Հանրապետության հետ բանակցություններ անցկացնելու նպատակով պատվիրակության եւ բանակցություններ անցկացնելու վերաբերյալ հրահանգների մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի որոշման նախագծի մասին

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան **որոշեց.**

1. Հավանություն տալ «Մաքսային միության եւ Չինաստանի Ժողովրդական Հանրապետության մաքսային սահմաններով տեղափոխվող ապրանքների եւ միջազգային փոխադրման տրանսպորտային միջոցների վերաբերյալ տեղեկություններ փոխանակելու մասին համաձայնագիր կնքելու առնչությամբ Չինաստանի Ժողովրդական Հանրապետության հետ բանակցություններ անցկացնելու նպատակով պատվիրակության եւ բանակցություններ անցկացնելու վերաբերյալ հրահանգների մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի որոշման նախագծին (կցվում է) եւ այն քննարկման ներկայացնել Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի հերթական նիստում:

2. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից՝ 30 օրացուցային օրը լրանալուց հետո:

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի
նախագահ



Վ. Խրիստենկո

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

« » –ի 2014 թվականի թիվ – քաղ.

Մաքսային միության եւ Չինաստանի Ժողովրդական Հանրապետության մաքսային սահմաններով տեղափոխվող ապրանքների եւ միջազգային փոխադրման տրանսպորտային միջոցների վերաբերյալ տեղեկություններ փոխանակելու մասին համաձայնագիր կնքելու առնչությամբ Չինաստանի Ժողովրդական Հանրապետության հետ բանակցություններ անցկացնելու նպատակով պատվիրակության եւ բանակցություններ անցկացնելու վերաբերյալ հրահանգների մասին

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհուրդը **որոշեց.**

1. Ձեռավորել Մաքսային միության եւ Չինաստանի Ժողովրդական Հանրապետության մաքսային սահմաններով տեղափոխվող ապրանքների եւ միջազգային փոխադրման տրանսպորտային միջոցների վերաբերյալ տեղեկություններ փոխանակելու մասին համաձայնագիր կնքելու առնչությամբ Չինաստանի Ժողովրդական Հանրապետության հետ բանակցություններ անցկացնելու նպատակով պատվիրակություն:

2. Հաստատել կից ներկայացվող՝

Մաքսային միության եւ Չինաստանի Ժողովրդական Հանրապետության մաքսային սահմաններով տեղափոխվող ապրանքների եւ միջազգային փոխադրման տրանսպորտային միջոցների վերաբերյալ տեղեկություններ

փոխանակելու մասին համաձայնագիր կնքելու առնչությամբ Չինաստանի Ժողովրդական Հանրապետության հետ բանակցություններ անցկացնելու նպատակով պատվիրակության կազմը.

Մաքսային միության եւ Չինաստանի Ժողովրդական Հանրապետության մաքսային սահմաններով տեղափոխվող ապրանքների եւ միջազգային փոխադրման տրանսպորտային միջոցների վերաբերյալ տեղեկություններ փոխանակելու մասին համաձայնագիր կնքելու առնչությամբ Չինաստանի Ժողովրդական Հանրապետության հետ բանակցություններ անցկացնելու վերաբերյալ հրահանգները:

3. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից՝ 10 օրացուցային օրը լրանալուց հետո:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի անդամներ՝

**Բելառուսի
Հանրապետությունից**

**Ղազախստանի
Հանրապետությունից**

**Ռուսաստանի
Դաշնությունից**

Ս. Ռումաս

Բ. Սագինտաեւ

Ի. Շուվալով

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Եվրասիական տնտեսական

հանձնաժողովի խորհրդի՝

2012 թվականի -ի թիվ որոշմամբ

ԿԱԶՄԸ

Մաքսային միության եւ Չինաստանի Ժողովրդական Հանրապետության մաքսային սահմաններով տեղափոխվող ապրանքների եւ միջազգային փոխադրման տրանսպորտային միջոցների վերաբերյալ տեղեկություններ փոխանակելու մասին համաձայնագիր կնքելու առնչությամբ Չինաստանի Ժողովրդական Հանրապետության հետ բանակցություններ անցկացնելու նպատակով պատվիրակության

Եվրասիական տնտեսական հանձնաժողովից

| | |
|---------------------|---|
| Գոշին | Մաքսային համագործակցության հարցերով |
| Վլադիմիր Անատոլիի | կոլեգիայի անդամ (նախարար) (պատվիրակության ղեկավար) |
| Սկիբա | Մաքսային ենթակառուցվածքների հարցերով |
| Վլադիմիր Յուրիի | դեպարտամենտի տնօրեն (պատվիրակության ղեկավարի տեղակալ) |
| Արեֆեւ | Մաքսային համագործակցության հարցերով |
| Ալեքսանդր Սերգեյի | կոլեգիայի անդամի (նախարարի) օգնական |
| Բադեյնով | Մաքսային ենթակառուցվածքների հարցերով |
| Վլադիմիր Ստանիսլավի | դեպարտամենտի մաքսային մարմինների տեղեկատվական համակարգերի ինտեգրման բաժնի պետ |

| | |
|----------------------|---|
| Բոնդարենկո | Մաքսային օրենսդրության եւ իրավական |
| Ալեքսեյ Վալերիի | պրակտիկայի հարցերով դեպարտամենտի մաքսային օրենսդրության բաժնի խորհրդատու |
| Բորցով | Մաքսային համագործակցության հարցերով |
| Օլեգ Վասիլիի | կոլեգիայի անդամի (նախարարի) քարտուղարության ղեկավար |
| Բոչարովա | Մաքսային օրենսդրության եւ իրավական |
| Եկատերինա Ալեքսանդրի | պրակտիկայի դեպարտամենտի մաքսային ծեւակերպումների եւ մաքսային հսկողության բաժնի պետի տեղակալ |
| Գավրիլենկո | Մաքսային օրենսդրության եւ իրավական |
| Թինա Նիկոլայի | պրակտիկայի հարցերով դեպարտամենտի մաքսային վճարների, մաքսային արժեքի եւ ծագման երկրի հարցերով բաժնի խորհրդական |
| Գալանամատիս | Մաքսային ենթակառուցվածքների հարցերով |
| Ալեքսանդր Նիկոլայի | դեպարտամենտի տնօրենի օգնական– Մաքսային ենթակառուցվածքների հարցերով դեպարտամենտի ռիսկերի հսկողության, վերլուծության եւ կառավարման ավտոմատացման բաժնի պետ |
| Գեորգիեսկի | առեւտրային քաղաքականության հարցերով |
| Ստանիսլավ Իգորի | դեպարտամենտի երկկողմ եւ տարածաշրջանային համագործակցության բաժնի պետ |

| | |
|--------------------|---|
| Դեմիդկինա | առեւտրային քաղաքականության հարցերով |
| Օլգա Վյաչեսլավի | դեպարտամենտի երկկողմ եւ տարածաշրջանային համագործակցության բաժնի խորհրդական |
| Ժարդեցկի | Մաքսային համագործակցության հարցերով |
| Վադիմ Ֆյոդորի | կոլեգիայի անդամի (նախարարի) օգնական |
| Կուզմիչ | Մաքսային ենթակառուցվածքների հարցերով |
| Լյուդմիլա Անատոլի | դեպարտամենտի տնօրենի տեղակալ |
| Լոզին | տեղեկատվական տեխնոլոգիաների |
| Ալեքսանդր Սերգեյի | դեպարտամենտի ՄՄ եւ ՄՏՏ ինտեգրացված տեղեկատվական համակարգերի ստեղծման եւ զարգացման աշխատանքների համակարգման բաժնի պետ |
| Ռոժկովա | Մաքսային ենթակառուցվածքների հարցերով |
| Ալեքսանդրա Անդրեյի | դեպարտամենտի մաքսային մարմինների տեղեկատվական համակարգերի ինտեգրման բաժնի խորհրդատու |
| Սեկերբաեա | Մաքսային օրենսդրության եւ իրավական |
| Դինարա Կաբիի | պրակտիկայի հարցերով դեպարտամենտի հեռանկարային մաքսային տեխնոլոգիաների բաժնի պետ |
| Խոտկո | Տեղեկատվական տեխնոլոգիաների հարցերով |
| Ալեքսանդր Նիկոլայի | դեպարտամենտի տնօրեն |

Բելառուսի Հանրապետությունից

| | |
|-------------------|---|
| Գայշուն | Բելառուսի Հանրապետության Մաքսային |
| Անդրեյ Ալեքսանդրի | ներկայացուցիչների ասոցիացիայի նախագահ |
| Դալիդովիչ | Բելառուսի Հանրապետության մաքսային |
| Սերգեյ Վիկտորի | պետական կոմիտեի տեղեկատվական տեխնոլոգիաների, մաքսային վիճակագրության եւ Մաքսային միության հարցերի վերլուծության վարչության պետի տեղակալ |
| Դուբինա | Բելառուսի Հանրապետության տրանսպորտի եւ |
| Սերգեյ Ստանիսլավի | հաղորդակցության նախարարության ավտոմոբիլային տրանսպորտային միջոցների վարչության պետ |
| Նեգրեյ | Բելառուսի Հանրապետության տրանսպորտի եւ |
| Սերգեյ Վիկտորի | հաղորդակցության նախարարության Արտաքին տնտեսական կապերի վարչության պետ |

Ղազախստանի Հանրապետությունից

| | |
|----------------|--|
| Գալիեա | Ղազախստանի Հանրապետության |
| Զուլբա Ֆարխադի | արդարադատության նախարարության տնտեսական ինտեգրման նախագծերի փորձաքննության հարցերով դեպարտամենտի մրցակցության, մենաշնորհի եւ մաքսային կարգավորման ոլորտում պայմանագրերի նախագծերի փորձաքննության վարչության |

փորձագետ

Մամբետալին

Ղազախստանի Հանրապետության

Ալիխան Եսենգոսի

գործարարների ազգային պալատի մաքսային վարչարարության հարցերով դեպարտամենտի տնօրեն

Մուկանով

Ղազախստանի Հանրապետության

Կայրատ Տերգելդիի

Ֆինանսների նախարարության Մաքսային հսկողության կոմիտեի արդիականացման եւ տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության գլխավոր փորձագետ

Օշակբաեւ

Ղազախստանի Հանրապետության

Ռախիմ Սակենի

գործարարների ազգային պալատի վարչության նախագահի տեղակալ-անդամ

Ռախիմով

Ղազախստանի Հանրապետության

Կուատ Ժենիսի

Ֆինանսների նախարարության Մաքսային հսկողության կոմիտեի մաքսային հսկողության կազմակերպման հարցերով վարչության գլխավոր փորձագետ

Ռախիմգոժին

Ղազախստանի Հանրապետության

Դիդար Սաբիրժանի

Ֆինանսների նախարարության Մաքսային հսկողության կոմիտեի իրավական ապահովման վարչության փորձագետ

Սաբիրով

Ղազախստանի Հանրապետության

Իսակիմ Աբդուվալիի

գործարարների ազգային պալատի տնտեսական ինտեգրման հարցերով դեպարտամենտի փորձագետ

Սմագուլովա

Ասել Սադիկիզի

Ղազախստանի Հանրապետության
արդարադատության նախարարության
հեղինակային և հարակից իրավունքների
ոլորտում պետական քաղաքականության
իրականացման հարցերով վարչության
գլխավոր փորձագետ

Տինիբեկով

Բուլատբեկ Սերիկուլի

Ղազախստանի Հանրապետության
Ֆինանսների նախարարության Մաքսային
հսկողության կոմիտեի մաքսային հսկողության
կազմակերպման հարցերով վարչության
փորձագետ

Շեստակով

Գենադի Ալեքսեյի

Ղազախստանի մաքսային բրոքերների
ասոցիացիայի խորհրդի նախագահ

Ռուսաստանի Դաշնությունից

Անդրեև

Սերգեյ Ալեքսանդրի

Ռուսաստանի Դաշնության տրանսպորտի
նախարարության միջազգային
համագործակցության հարցերով
դեպարտամենտի տնօրենի տեղակալ

Անդրյուխինա

Մարիա Ալեքսանդրի

Ռուսաստանի Դաշնության տրանսպորտի
նախարարության իրավական ապահովման և
օրենսդրական գործունեության հարցերով
դեպարտամենտի դաշնային ծառայությունների
և գործակալությունների ակտերի
վերլուծության բաժնի խորհրդատու

| | |
|--------------------|--|
| Դոմրաչյով | Ռուսաստանի Դաշնության կապի եւ զանգվածային հաղորդակցության նախարարության տեղեկատվայնացման նախագծերի դեպարտամենտի խորհրդական |
| Ալեքսեյ Ալեքսանդրի | |
| Էմելյանով | Ռուսաստանի Դաշնության տրանսպորտի նախարարության երկաթուղային տրանսպորտի բնագավառում պետական քաղաքականության հարցերով դեպարտամենտի տնօրենի տեղակալ |
| Անդրեյ Ալեքսանդրի | |
| Զիմին | Ռուսաստանի Դաշնության կապի եւ զանգվածային հաղորդակցության նախարարության իրավական դեպարտամենտի միասնական տեղեկատվական տարածք ստեղծելու եւ տեղեկատվության պաշտպանության հարցերի իրավական ապահովման բաժնի պետ |
| Իվան Վադիմի | |
| Կոզիրեւ | Մաքսային դաշնային ծառայության մաքսային համագործակցության հարցերով վարչության պետի առաջին տեղակալ |
| Եվգենի Ալեքսանդրի | |
| Շերիշեա | Ռուսաստանի Դաշնության տրանսպորտի նախարարության միջազգային համագործակցության հարցերով դեպարտամենտի միջկառավարական հանձնաժողովների եւ ԱՊՀ երկրների հարցերով բաժնի պետի տեղակալ |
| Ելենա Իվանի | |

ՀԱՍՏԱՏՎԱԾ ԵՆ

Եվրասիական տնտեսական

հանձնաժողովի խորհրդի՝

2012 թվականի -ի թիվ որոշմամբ

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

Մաքսային միության եւ Չինաստանի Ժողովրդական Հանրապետության մաքսային սահմաններով տեղափոխվող ապրանքների եւ միջազգային փոխադրման տրանսպորտային միջոցների վերաբերյալ տեղեկություններ փոխանակելու մասին համաձայնագիր կնքելու առնչությամբ Չինաստանի Ժողովրդական Հանրապետության հետ բանակցություններ անցկացնելու վերաբերյալ

I. Մաքսային միության եւ Չինաստանի Ժողովրդական Հանրապետության մաքսային սահմաններով տեղափոխվող ապրանքների եւ միջազգային փոխադրման տրանսպորտային միջոցների վերաբերյալ տեղեկություններ փոխանակելու մասին համաձայնագիր կնքելու հիմնական նպատակները

Մաքսային միության եւ Չինաստանի Ժողովրդական Հանրապետության մաքսային սահմաններով տեղափոխվող ապրանքների ու միջազգային փոխադրման տրանսպորտային միջոցների վերաբերյալ տեղեկություններ փոխանակելու մասին համաձայնագրի կնքումն (այսուհետ՝ համաձայնագիր) ուղղված է 2012 թվականի դեկտեմբերի 6-ին Եվրասիական տնտեսական հանձնաժողովի եւ Չինաստանի Ժողովրդական Հանրապետության առևտրի նախարարության միջև ստորագրված «Առևտրային հարցերով համագործակցության մասին» հուշագրի հիմնական դրույթների կիրարկմանը եւ կատարելագործմանը:

Համաձայնագիր կնքելու հիմնական նպատակներն են՝ Մաքսային միության եւ Եվրասիական տնտեսական տարածքի (Եվրասիական տնտեսական միության) անդամ պետությունների (այսուհետ՝ անդամ պետություններ) առևտրի մաքսային վիճակագրական տվյալների տարածումը նվազեցնելու նպատակով Չինաստանի Ժողովրդական Հանրապետության (ՉԺՀ) հետ տեղեկությունների համախմբված փոխանակման կազմակերպումը.

մաքսային հսկողության արդյունավետության բարձրացումը, ապրանքների մաքսային հայտարարագրման ճշգրտությունը.

մաքսային համագործակցության ընդլայնումը:

II. Համաձայնագրի առարկան

Համաձայնագրի առարկա է այն ապրանքների վերաբերյալ տեղեկությունների փոխանակումը, որոնք

ՉԺՀ մաքսային տարածքից ներմուծվում են Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ Միություն) մաքսային տարածք, այդ թվում՝ երրորդ պետությունների տարածքից տարանցման կարգով ՉԺՀ մաքսային տարածքով փոխադրվում են Միության մաքսային տարածք, ինչպես նաև Միության մաքսային տարածքով հետագա տարանցման կարգով երրորդ պետություններ փոխադրելու համար.

Միության մաքսային տարածքից արտահանվում են ՉԺՀ մաքսային տարածք, այդ թվում՝ Միության մաքսային տարածքով տարանցման կարգով երրորդ պետությունների տարածքից փոխադրվում են ՉԺՀ մաքսային տարածք, ինչպես նաև ՉԺՀ մաքսային տարածքով հետագա տարանցման կարգով երրորդ պետություններ փոխադրելու համար.

Միության եւ ՉԺՀ մաքսային տարածքներով տարանցման կարգով փոխադրվում են երրորդ պետությունների միջով:

Համաձայնագրի առարկա չէ այն ապրանքների մասին տեղեկությունների փոխանակումը, որոնք տեղափոխվում են ֆիզիկական անձանց կողմից՝ անձնական օգտագործման համար:

III. Բանակցային դիրքի ձեւավորումը

Բանակցությունները վարում է համատեղ պատվիրակությունը, որի կազմում ընդգրկվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) եւ անդամ պետությունների ներկայացուցիչներ: Բանակցությունների կոնկրետ փուլի մասնակիցների կազմը ձեւավորվում է պատվիրակության անդամներից՝ ելնելով բանակցությունների օրակարգից: Անհրաժեշտության դեպքում բանակցություններին կարող են որպես փորձագետներ մասնակցել Հանձնաժողովի եւ անդամ պետությունների ներկայացուցիչները:

Բանակցային դիրքի համաձայնեցումն իրականացվում է մաքսային կարգավորման հարցերով Խորհրդատվական կոմիտեի շրջանակներում՝ պատվիրակության անդամների մասնակցությամբ, իսկ այդ համաձայնեցման անհնարինության դեպքում կամ սույն Հրահանգում փոփոխություններ կատարելու անհրաժեշտության դեպքում համապատասխան հարցը քննարկման է ներկայացվում Կոմիտեի խորհրդի նիստում:

Բանակցությունների գործընթացում անհրաժեշտ է ՉԺՀ ներկայացուցիչների ուշադրությունը կենտրոնացնել անդամ պետությունների եւ ՉԺՀ երկաթուղային փոխադրողների միջեւ նախնական տեղեկությունների փոխանակումը կազմակերպելու անհրաժեշտության վրա:

IV. Համաձայնագրի տեքստը

Համաձայնագրի տեքստը կազմվում է ռուսերենով, անգլերենով եւ

չինարենով, ընդ որում՝ բոլոր տեքստերն էլ հավասարազոր են: Համաձայնագրի մեկնաբանության մեջ անհամապատասխանություններ ի հայտ գալու դեպքում օգտագործվում է անգլերենով տեքստը:

V. Տեղեկությունների փոխանակումը

Համաձայնագրի շրջանակներում տեղեկությունների փոխանակումն իրականացվում է մաքսային նպատակներով: Համաձայնագրի շրջանակներում փոխանակման արդյունքում ստացված տեղեկությունները չեն կարող հաղորդվել այլ անձանց առանց համաձայնագրի՝ այդ տեղեկությունները տրամադրող մասնակիցների գրավոր համաձայնության:

Անդամ պետությունների կողմից պետական գաղտնիք (պետական գաղտնիքներ) կամ սահմանափակ հասանելիություն ունեցող տեղեկատվություն համարվող տեղեկությունների փոխանակումը պետք է իրականացվի անդամ պետությունների օրենսդրության՝ դրանց պաշտպանությանը վերաբերող պահանջների պահպանմամբ:

Տեղեկությունների փոխանակումը պետք է իրականացվի պարբերաբար էլեկտրոնային տարբերակով՝ համաձայնագիրը ստորագրելուց հետո հաստատված տեղեկությունների փոխանակման տեխնիկական պայմաններին (տեխնոլոգիական կանոնակարգերին) համապատասխան (այսուհետ՝ տեխնիկական պայմաններ), գերադասելի է իրական ժամանակում (հնարավորության դեպքում):

Բանակցությունների ընթացքում Հանձնաժողովը հանդես է գալիս որպես ՉԺՀ-ի հետ տեղեկությունների փոխանակումը կազմակերպելու գործընթացում Միության շահերը ներկայացնող կողմ:

Տեղեկությունների փոխանակումն իրականացվելու է Միության ինտեգրացված տեղեկատվական համակարգի օգտագործմամբ: Տեղեկությունները պետք է մուտք գործեն Հանձնաժողովի ինտեգրացիոն

հատված: Ընդ որում, տեղեկությունների փոխանակումը չպետք է ենթադրի Հանձնաժողովի մակարդակով կենտրոնական տեղեկատվական ռեսուրսների ստեղծում:

Ըստ համաձայնագրի՝ ենթադրաբար փոխանակման համար նախատեսված տեղեկությունների կազմը պետք է հաստատվի ապրանքների մասին հայտարարագրում (տարանցիկ փոխադրման հայտարարագրում) նշված տվյալների ծավալով պայմանավորված՝ ելնելով ապրանքների տեղափոխման հետեյալ ուղղություններից՝

անդամ պետությունների եւ ՉԺՀ-ի միջեւ իրականացվող փոխադարձ առևտուր. ՉԺՀ մաքսային տարածքից Միության մաքսային տարածքով տարանցիկ փոխադրում երրորդ պետություններ.

Միության մաքսային տարածքից ՉԺՀ մաքսային տարածքով տարանցիկ փոխադրում երրորդ պետություններ.

երրորդ պետությունների տարածքից Միության մաքսային տարածքով տարանցիկ փոխադրում ՉԺՀ.

երրորդ պետությունների տարածքից ՉԺՀ մաքսային տարածքով տարանցիկ փոխադրում անդամ պետություններ.

Միության եւ ՉԺՀ մաքսային տարածքներով տարանցիկ փոխադրում երրորդ պետությունների տարածքների միջեւ.

Համաձայնագրի մեջ որպես հավելված ընդգրկել Մաքսային միության եւ Չինաստանի Ժողովրդական Հանրապետության մաքսային սահմաններով տեղափոխվող ապրանքների եւ միջազգային փոխադրման տրանսպորտային միջոցների մասին այն տեղեկությունների օրինակելի կազմը, որոնք հավելվածի համաձայն ենթադրաբար նախատեսված են փոխանակման համար:

Համաձայնագրով կարող է նախատեսվել տեխնիկական պայմաններին համապատասխան տեղեկատվական փոխգործակցության տեխնոլոգիաների

մշակման ընթացքում տեղեկությունների փոխանակման փուլային իրականացում: Փորձնական (թեստային) մշակման փուլում տեղեկությունների փոխանակումը կարող է հարաբերակցվել ապրանքների տեղափոխման ուղղությունների, անցակետերի, ապրանքների նկարագրման եւ ծածկագրման ներդաշնակեցված համակարգի ապրանքային դիրքերի, ինչպես նաեւ արտաքին տնտեսական գործունեության առանձին մասնակիցների հետ: Տեղեկությունների փոխանակման նշված փուլային իրականացմանը համապատասխան տեխնիկական պայմաններում կարող են կատարվել փոփոխություններ:

Հաղորդվող տվյալների կառուցվածքը եւ ձեւաչափերը, ինչպես նաեւ տեղեկատվական փոխգործակցության կանոններն ու կանոնակարգերը սահմանվում են տեխնիկական պայմաններով: Համաձայնագրում թույլատրվում է նորմերի առկայություն այն մասին, որ փոխանակման ենթակա տվյալների կառուցվածքը եւ ձեւաչափերը սահմանելիս կարող են օգտագործվել այն տվյալների մոդելը, որն առաջարկվում է

Համաշխարհային մաքսային կազմակերպության կողմից՝ հաշվի առնելով անդամ պետությունների մաքսային ծառայությունների պահանջները:

Տեղեկությունների փոխանակումը պետք է իրականացվի ռուտերենով կամ անգլերենով:

Տեղեկությունների փոխանակման ընթացքում ծագող վեճերը՝ ներկայացված տեղեկությունների՝ փաստացի տեղափոխված ապրանքների հետ անհամապատասխանության առնչությամբ, պետք է լուծվեն խորհրդատվությունների եւ բանակցությունների անցակցման միջոցով:

ՀԱՎԵԼՎԱԾ

Մաքսային միության եւ Չինաստանի Ժողովրդական
 Հանրապետության մաքսային սահմաններով
 տեղափոխվող ապրանքների եւ միջազգային
 փոխադրման տրանսպորտային միջոցների վերաբերյալ
 տեղեկություններ փոխանակելու մասին համաձայնագիր
 կնքելու առնչությամբ Չինաստանի Ժողովրդական
 Հանրապետության հետ բանակցություններ վարելու
 վերաբերյալ հրահանգների

**Մաքսային միության եւ Չինաստանի Ժողովրդական Հանրապետության
 մաքսային սահմաններով տեղափոխվող ապրանքների եւ միջազգային
 փոխադրման տրանսպորտային միջոցների մասին ենթադրաբար
 փոխանակման համար նախատեսված տեղեկությունների օրինակելի կազմը**

| | Պարտադիր տվյալներ | Լրացուցիչ տվյալներ | Տեղեկատվական տվյալներ |
|---|--|--|--|
| Ապրանքները տեղափոխող կամ որպես ապրանքների տեղափոխման նախաձեռնող հանդես եկող անձանց մասին տեղեկություններ* | ապրանքներն ուղարկողը ապրանքը ստացողը հայտարարատուն ֆինանսական կարգավորման համար պատասխանատու անձ ապրանքներն ուղարկողի հասցեն ապրանքներն ստացողի հասցեն | հայտարարատուի հասցեն ապրանքները փոխադրողի անվանումը փոխադրողի հասցեն | ապրանքները տեղափոխող կամ որպես ապրանքների տեղափոխման նախաձեռնող հանդես եկող անձանց մասին ցանկացած լրացուցիչ տեղեկություն |
| Տրանսպորտային միջոցի վերաբերյալ տեղեկություններ | տրանսպորտային միջոցի համարը բեռնարկի համարը | տրանսպորտային միջոցի գրանցման երկրի ծածկագիրը | տրանսպորտային միջոցի վերաբերյալ ցանկացած լրացուցիչ տեղեկություն |

Ապրանքների
վերաբերյալ
տեղեկություններ

տրանսպորտային
միջոցի տեսակի
ծածկագիրը
ապրանքների
անվանումը

ապրանքների
նկարագրությունը

ապրանքների
վերաբերյալ
ցանկացած լրացուցիչ
տեղեկություն

ապրանքի հերթական
համարը

փաթեթվածքների
նկարագրությունը
(քանակը, տեսակը,
դրոշմավորումը եւ
հերթական
համարները)

ապրանքի գինը

պայմանագրի գնի
արժույթի ծածկագիրը

ապրանքներն
արտադրողի մասին
տվյալներ

բեռնատեղիների
ընդհանուր քանակը

ապրանքների
համաքաշը կամ
ապրանքների ծավալը

ապրանքների
դրոշմավորման
վերաբերյալ
տեղեկություններ

ապրանքների զուտ
քաշը

չափման լրացուցիչ
միավորի ծածկագիրը

ապրանքների
դասակարգման
ծածկագիրը՝ ըստ
Ապրանքների
նկարագրման եւ

ապրանքի քանակն

ծածկագրման
ներդաշնակեցված
համակարգի (6 նիշից ոչ
պակաս)

ըստ լրացուցիչ
չափման միավորի

ապրանքների
ընդհանուր քանակը

վիճակագրական
արժեքը

փաթեթավորման
տեսակի ծածկագիրը
հայտագրվող մաքսային
ընթացակարգի
ծածկագիրը

նախորդող մաքսային
ընթացակարգի
ծածկագիրը

Ապրանքին կից
ներկայացված,
տրանսպորտային եւ
այլ փաստաթղթերի
վերաբերյալ
տեղեկություններ

մատակարարման
պայմանների
ծածկագիրը,
աշխարհագրական
կետի անվանումը

փոխադրվող
ապրանքների
առետորային
փաստաթղթերի
վերաբերյալ տվյալներ

ապրանքին կից
ներկայացված,
տրանսպորտային եւ
այլ փաստաթղթերի
վերաբերյալ
ցանկացած լրացուցիչ
տեղեկություն

արտաքին տնտեսական
պայմանագրի համարը
եւ ամսաթիվը ու հաշիվ-
ապրանքագրի (ինվոյսի)
համարը

տրանսպորտային
փաստաթղթերի
վերաբերյալ տվյալներ

փաստաթղթի
գրանցման համարը
(ապրանքների մասին
հայտարարագրի
համարը կամ

| | | | |
|---------------------|--|---|---|
| | տարանցիկ փոխադրման հայտարարագրի համարը) | | |
| Այլ տեղեկություններ | ապրանքներն ուղարկող երկրի ծածկագիրը ապրանքների նշանակման երկրի ծածկագիրը ապրանքների ծագման երկրի ծածկագիրը | - | - |

* Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունը և Մաքսային միության ու Եվրասիական տնտեսական տարածքի (Եվրասիական տնտեսական միության) անդամ պետությունը տեղեկություններ չեն տրամադրում իրենց ռեզիդենտների մասին: